Հայկական Բժշկական Ասոցիացիա
Армянская Медицинская Ассоциация
Armenian Medical Association

18.09.2020

Հարգելի գործընկերներ,

Հուսամ լավ եք և արտակարգ ռեժիմի ավարտը արդեն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում աշխատելու համար: Սրան զուգահեռ, բոլորիս գործերն էլ, հոգսերն էլ, գնալով ավելի են շատանում և ծանրանում ինչը բնական է: Նման վիճակներում է, որ պետք է առավել ջանք գործադրել մեխանիզմներ ձևավորելու, որոնք կօգնեն հաղթահարել հիմնական դժվարությունները, և արդեն ժամանակն է ավարտին հասցնելու դեռևս մեկ տարի առաջ սկսված գործընթացը՝ Հայկական բժշկական ասոցիացիան (ՀԲԱ) ձևավորել մասնագիտական ասոցիացիաների ասոցիացիա: Նորացված ՀԲԱ-ն, որպես մասնագիտական ասոցիացիաների ասոցիացիա կլինի ինքնակառավարվող, ինքնակատարելագործվող և կապահովի կայունություն և շարունակական զարգացում առողջապահության ոլորտում, և իր կառուցվածքի և հենց սկզբից ճիշտ սկզբունքների վրա ձևավորվելով՝ զերծ կլինի բոլոր այն թերություններից, որոնք բնորոշ են և՛ պետական կառույցներին, և՛ գործող շատ հասարակական կազմակերպություններին:

Քանի որ նախորդ հանդիպումներում և նամակներում բավարար քննարկել և սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել, այժմ ներկայացնում եմ սկսած գործընթացը ավարտական հանգրվանին հասցնելու հետևյալ ճանապարհային քարտեզը.

- Մինչև նոյեմբերի մեկը յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն գործադիր կառույցը որոշում է կայացնում անդամակցել ՀԲԱ-ին և որոշումը, անդամակցության դիմումի հետ ներկայացնում/ուղարկում է ՀԲԱ:
- ՀԲԱ Գործադիր վարչությունը ընդունում է բոլոր դիմումները և նոյեմբերի մեկին ունենում ենք արդեն նոր որակի ՀԲԱ, որի նախկին կանոնադրությամբ աշխատելը արդեն չի կարող արդյունավետ լինել: Արդյունքում մեկամսյա ժամկետում նախապատրաստվում է Համագումար, որին մասնակցում են բոլոր անդամ կազմակերպությունները և փոփոխվում է կանոնադրությունը և ՀԲԱ ղեկավար կառույցներ են դառնում Նախագահը և ընտրված նախագահը, ով երկու տարի հետո մեխանիկորեն դառնում է նախագահ և ընտրվում է նոր ընտրված նախագահ (այսինքն բացառվում է որևէ մեկի կողմից երկարաժամկետ կազմակերպության ղեկավարումը), Խորհուրդը, որը լինում է ներկայացուցչական մարմինը (ներկայացված են լինում բոլոր անդամ կազմակերպությունները) և զբաղվում է ՀԲԱ կառավարման խնդիրներով, և գործադիր վարչությունը (համատեղ կորոշենք ընտրովի կլինի թե նշանակովի)՝ որը նախագահի հետ զբաղվում է ղեկավարման հարցերով: Դետալները կքննարկվեն արդեն համատեղ, կարևորը այժմվանից սկզբունքների շուրջ համաձայնության գալն ու ֆիքսելն է:
- Համագումարի օրը միասին կորոշենք, բայց այժմվանից կարող ենք ֆիքսել, որ պետք է լինի 2020թ. ընթացում, ամենայն հավանականությամբ դեկտեմբեր ամսին:

Ժամանակացույցը լինում է հետևյալը.

Մինչև 01.11.2020 - բոլոր մասնագիտական ասոցիացիաների որոշումներն ընդունված են լինում և դիմումներն ուղարկված

Մինչև 01.12.2020 – որոշված է լինում համագումարի օրը, մասնակցության նորմերը և համաձայնեցված փոփոխված կանոնադրության նախագծի նախնական տարբերակը՝ հիմք ընդունելով վերը ներկայացված պարտադիր սկզբունքները:

Մինչև 29.12.2020 կազմակերպվում է համագումարը և ձևավորվում է արդեն նոր կանոնադրությամբ և նոր կառվարման մեխանիզմով Հայկական բժշկական ասոցիացիա:

Հիմա բոլորիս հնարավորություն է ընձեռվում առանց որևէ լարվածության կամ անհանգստության, առանց սուվերենության որևէ կորստի՝ ավելի ուժեղանալու, ավելի ուժեղացնելու առողջապահական համակարգը և արդյունքում նաև մեր երկիրը:

Բոլոր տեսակի հարցերով կարող եք գրել կամ զանգահարել:

Պատրաստ եմ մասնակցել բոլոր կազմակերպությունների որոշում ընդունող մարմինների նիստերին և պատասխանել ցանկացած հարցի:

Հարգանքով,

ՀԲԱ Նախագահ Ա.Սողոյան